

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ներսիսյան Ներսես Նորայրի

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարկոսյան Աշոտ Խաչատուրի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մնացականյան Հայկ Գերասիմի

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Դադունց Արման Սասունի

Առաջատար կազմակերպություն՝


Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 17-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. հունվարի 16-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Տ.Ս. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ աշխարհի շատ երկրներում գյուղատնտեսությունը համարվում է տնտեսության առանցքային ոլորտ: Գյուղատնտեսությունից է առավելապես կախված երկրի պարենային անվտանգությունը, ինչն ոլորտի դերն ավելի է կարևորում, հատկապես երկրի կայուն զարգացման համատեքստում: Քանի որ գյուղատնտեսությունն անընդհատ ենթարկվում է բնական տարերային աղետների ներգործությանը, այն նույնպես ներառվում է բարձր ռիսկայնություն ունեցող տնտեսական գործունեության տեսակների շարքին: Իսկ գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարման ամենաարդյունավետ գործիքն ապահովագրությունն է՝ տնտեսվարող սուբյեկտներին տարատեսակ ռիսկերի առկայության դեպքում հնարավորություն ընձեռելով համապատասխան փոխհատուցում ստանալ:

Ընդհանրապես գյուղատնտեսության ապահովագրությունը տրամադրում է ֆինանսական երաշխիքներ, որը նախատեսված է պաշտպանելու ֆերմերներին անկանխատեսելի իրադարձություններից, որոնց շարքին են դասվում՝ վնասատուները, բնական աղետները, հիվանդությունները, շուկայական տատանումները և այլն: Ապահովագրությունը հնարավորություն է տալիս մեղմելու ռիսկերը՝ առաջարկելով ֆինանսական աջակցություն բերքի, անասունների կորուստների կամ սարքավորումների վնասման դեպքերում:

Գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության և շահութաբերության բարձրացմանը, և առհասարակ արդյունավետության բարելավմանը հնարավոր է հասնել ռիսկերի կառավարման համապատասխան և ճկուն գործիքներ կիրառելով:

Լինելով ռազմավարական նշանակության ոլորտ, ՀՀ գյուղատնտեսության ոլորտը, զերծ չէ տարատեսակ ռիսկերից, որոնք կարող են խնդիրներ ստեղծել ֆերմերների, ինչպես նաև կառավարության համար: ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունն առանց պետական աջակցության անհնար է պատկերացնել, որով էլ և պայմանավորված է սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնախնդիրները: Սույն ատենախոսության նպատակն է բացահայտել և վերլուծել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության արդի վիճակը, և զարգացման մարտահրավերները՝ ներկայացնելով պետական աջակցության համակարգի կատարելագործման արդյունավետ ուղիներ:

Ատենախոսության սահմանված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

- ✓ ուսումնասիրել գյուղատնտեսության ոլորտի առկա ռիսկերը, տեսակները և կառավարման հնարավոր տարբերակները,
- ✓ վերլուծել գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձը և ոլորտում կիրառված գործիքակազմերը,
- ✓ հետազոտել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության իրավական դաշտը, ոլորտում առկա խնդիրները,
- ✓ ուսումնասիրել ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության հնարավոր կոռուպցիոն ռիսկերի դրսևորումները և հակակոռուպցիոն քաղաքականությունը,

- ✓ բացահայտել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի բնականոն գործունեությունից հնարավոր շեղումները, առանձնահատկությունները,
- ✓ բացահայտել կենդանիների, հատկապես մեղվաբուծության ապահովագրության զարգացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում,
- ✓ առանձնացնել ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության համակարգի կատարելագործման և պետական աջակցության զարգացման հնարավոր ուղիները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության ոլորտն է, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի զարգացումը, ինչպես նաև կառավարման հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիների մշակումը:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Գյուղատնտեսության ոլորտում ուսումնասիրությունների իրականացումը, առկա և առաջացող խնդիրների լուծման ուղիները գտնելու գլխավոր նախապայմանը ճիշտ ընտրված նպատակներն ու ցանկալի արդյունքին հասնելու համար առաձնացված գործիքակազմերն են: Գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանը կամ մեղմմանն ուղղված բազմաթիվ գործիքներ կան, որոնցից որոշները կարող են ավելի արդյունավետ լինել, եթե օգտագործվեն ըստ նշանակության: Ուսումնասիրություններն իրականացվել են վիճակագրական տվյալների հիման վրա, ինչպես օրինակ ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրում ներառված ցուցանիշների և տվյալների բազաները:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական շուկայի գործունեության հիմնական պայմանների և իրավիճակային փոփոխությունների ուսումնասիրության համար իրականացվող հետազոտությունների ընթացքում կիրառվել են ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդների որոշակի տարրեր: Առավել արդյունավետ է մեթոդների կիրառումը համակցված եղանակով՝ համապատասխան տարրեր առանձնացնելով:

Թե՛ անասնաբուծության, և թե՛ բուսաբուծության ոլորտներում առկա խնդիրների, ցուցանիշների դիմամիկ փոփոխությունների և հնարավոր զարգացումների վերաբերյալ կատարված վերլուծությունների համար հետազոտական մեթոդաբանությունը ներառել է համեմատական, անալիտիկ և վիճակագրական մեթոդների համակցություն: Իրականացվել է համեմատական վերլուծություն հատկապես եվրոպական երկրների գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում կատարված փորձերի և արդյունավետ համակարգերի իրագործման վերաբերյալ: Հետազոտության ընթացքում կատարվել են կանխատեսումներ՝ որոշակի ցուցանիշների հնարավոր աճի կամ նվազման միտումները բացահայտելու, ըստ այդմ՝ գյուղատնտեսության ոլորտում պետական աջակցության քաղաքականության մշակման արդյունավետ ռազմավարություն ընտրելու նպատակով:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առանձնացվել են հետևյալ գիտական նորույթները.

- ✓ սեզոնային ինդեքսների և վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում, որի շրջանակներում կոռելյացիոն վերլուծության հիման վրա գնահատվել է ամենապահանջված պրոդուկտների՝ խաղողի և ծիրանի գծով ապահովագրության փոփոխության ազդեցությունը պիլոտային ծրագրի արդյունավետության վրա,

- ✓ անասնաբուծության ապահովագրության մեկնարկային կետ առանձնացնելով ոլորտում գործող սուբսիդավորման նախագծերը, գնահատվել է անասնաբուծության ոլորտում նորարարական տեխնոլոգիաների, այդ թվում՝ խելացի անասնաշենքերի ներդրման արդյունավետությունը և նպաստումն ոլորտի զարգացման ու ապահովագրական ծրագրերի իրականացման գործընթացներում,
- ✓ որպես ելակետ ընդունելով մեղվաբուծության ոլորտում մեղրի մնացորդի տվյալները, մշակվել է մեղվաբուծության ապահովագրության ներդրման կառուցակարգ, իսկ կլաստերային վերլուծության միջոցով առանձնացվել են «առավել մոտ» մարզերը՝ օպտիմալ ռեսուրսային ծախսերի ու արդյունավետ ապահովագրության ծրագիր իրականացնելու նպատակով,
- ✓ լոգարիթմական մոդելի միջոցով գնահատվել է առանց պետական աջակցության ֆերմերների՝ մեղվաբուծության ոլորտում ապահովագրությանը վճարելու պատրաստակամությունը և մշակվել է ապահովագրական մոդելի կիրառության մեթոդաբանություն, որն ապացուցում է ոլորտի բարձր ռիսկայնությունը և ցույց է տալիս, որ առանց պետական սուբսիդավորման ապահովագրավճարների արդյունավետ համակարգի ներդրումը գրեթե անհնար է:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հաշվի առնելով ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության առանձնահատկությունները, առկա հիմնախնդիրները և լուծման հնարավոր ուղիները, ատենախոսությունում կատարված վերլուծությունները և առաջարկությունները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության կառավարության, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության առավել արդյունավետ համակարգ ստեղծելու և հետագայում զարգացնելու նպատակով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի 9 հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է հետևյալ հաջորդական կառուցվածքով՝ ներածություն, երեք գլուխներ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ և հավելվածներ: Ատենախոսությունը բաղկացած է 180 էջից՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «**Ներածություն**» բաժնում հիմնավորվել են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակներն ու հիմնախնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված հիմնական արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, ներկայացվել են հետազոտության շրջանակներում իրականացված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության ընդհանուր բնութագիրը և հայեցակարգերը» գլխում բացահայտվում է գյուղատնտեսության ռիսկերի տեսական հիմքը՝ դրանց տեսակների, բնույթի և առաջացման պատճառների վերլուծությամբ: Համակողմանիորեն անդրադարձ է կատարվել միջազգային փորձին՝ ներկայացնելով գյուղատնտեսական ապահովագրության մոդելները, կառուցվածքն ու գործիքակազմը տարբեր երկրների օրինակներով: Այս բաժնում առանձնահատուկ

ուշադրություն է դարձվել պետական աջակցության դերակատարությանը՝ ցույց տալով, որ առանց պետական միջամտության ապահովագրական համակարգն ունի զարգացման դժվարություններ և խոչընդոտներ: Գլուխը եզրափակվում է Հայաստանի Հանրապետությունում գործող պետական աջակցության համակարգի վերլուծությամբ՝ ներկայացնելով դրա կառուցվածքային առանձնահատկությունները, կիրառական խնդիրներն ու զարգացման հնարավոր ուղղությունները:

Գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի տարբերակումը, տեսական գիտելիքներն էլ ավելի կարևորվում և արժևորվում են՝ կայուն եկամուտներ ստեղծելու և գյուղատնտեսության բիզնես գործունեության արդյունավետ կատարման նոր հնարավորություններ ստեղծելու տեսանկյունից: Գյուղատնտեսության ապահովագրության շուկայի մասնաբաժինն ամբողջ աշխարհում գնահատվել է 39.5 միլիարդ ԱՄՆ դոլար, որից Եվրոպային բաժին է հասնում շուկայի ավելի քան 30 տոկոսը, կազմելով գրեթե 12 միլիարդ ԱՄՆ դոլար:

Գյուղատնտեսության ոլորտի կայունության ապահովումը, գյուղատնտեսական ռիսկերի նվազեցումը բազմաթիվ երկրների համար գերակա խնդիր է: Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում աշխարհում իրենց մեծ ավանդն են ներդրել այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իսպանիան, Ֆրանսիան, Նիդեռլանդները, ԱՄՆ-ը, Կանադան, Ճապոնիան, Չինաստանը, Ռուսաստանի Դաշնությունը և այլ երկրներ:

Ըստ միջազգային փորձի ուսումնասիրությունների գյուղատնտեսության ոլորտում հնարավոր է մեղմել ռիսկերը՝ կիրառելով որոշակի գործիքներ և ռազմավարություններ: Այդպիսի ռազմավարությունների շարքում կարելի է առանձնացնել ex post և ex ante ռազմավարությունները: Երկու ռազմավարություններն էլ կարող են բառացիորեն սահմանվել որպես համապատասխանաբար ցնցումներից առաջ և հետո ձեռնարկված միջոցառումներ:

Գյուղատնտեսության ապահովագրության համախառն ապահովագրավճարների չափը փոփոխվել է վերջին 25 տարիների ընթացքում: 2000-ական թվականներից սկսած, համախառն ապահովագրավճարների չափն ավելացել է մոտավորապես 8 անգամ՝ 2025 թվականին հասնելով 377 մլն. դոլարի:¹

Աշխարհում գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում անասնաբուծության շուկան 2025 թվականին արդեն հասել է 9.1 միլիարդ ԱՄՆ դոլարի: Ըստ կանխատեսումների՝ 2030 թվականին այս ցուցանիշը կաճի՝ հասնելով գրեթե 13 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ միջին տարեկան աճի տեմպը կազմելով 7.2 %: Ցուցանիշի փոփոխության վրա մեծապես ազդում են ինչպես նորարական լուծումները, ոլորտում արհեստական բանականության և այլ գործիքների կիրառումները, այնպես էլ պետական աջակցության կամ սուբսիդիոն ծրագրերի ավելացումները:²

Ըստ վերլուծությունների, 2021 թվականին խելացի գյուղատնտեսության շուկայական արժեքը կազմել է գրեթե 13 մլրդ. ԱՄՆ դոլար, որը կանխատեսվում է, որ կաճի մինչև 2027 թվականը՝ հասնելով 33 միլիարդ ԱՄՆ դոլարի, աճելով գրեթե 2.5 անգամ: Խելացի գյուղատնտեսության շուկայական արժեքի դինամիկ աճը պայմանավորված է ոլորտի նկատմամբ մեծ պահանջարկով և նորագույն տեխնոլոգիաների կիրառման անընդհատ աճող հնարավորություններով: Այս ցուցանիշները փաստում են, որ ոլորտում մեծ վստահություն կա թվայնացման և թվային լուծումների նկատմամբ:

¹ Direct premiums written by agricultural insurance sector in Argentina in 2000, 2015 and 2025՝ <https://www.statista.com/statistics/730204/direct-premiums-written-agricultural-insurance-sector-argentina/>

² LIVESTOCK INSURANCE MARKET SIZE & SHARE ANALYSIS - GROWTH TRENDS & FORECASTS (2025 - 2030) Source: <https://www.mordorintelligence.com/industry-reports/livestock-insurance-market>

ՀՀ-ում գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության պետական աջակցության համակարգի ուսումնասիրությունների շրջանակներում անդրադարձ է կատարվել գյուղատնտեսության ոլորտում տարերային առավել վտանգավոր երևույթների դինամիկ փոփոխություններին: Ըստ կատարված վերլուծությունների, ՀՀ-ում առավել շատ տեղի ունեցող և գրանցված տարերային վտանգավոր երևույթների քանակում առավել մեծ կշիռ ունեն մասնավորապես կարկուտները, քամի, փոթորիկները և քարաթափերը: Ըստ տարերային աղետների վտանգավոր երևույթների քանակի դինամիկ փոփոխության, ՀՀ-ում 2021 թվականը դիտարկվում է ամենաշատ քանակային աճի ցուցանիշով տարի: Իսկ ամենաքիչ տարերային վտանգավոր երևույթները գրանցվել են 2016 թվականին: Ամենաշատ դեպքերը գրանցվել են 2021-ից 2024 թվականները ներառյալ: Այսինքն վերջին տարիները բուսաբուծության ոլորտը լի է տարատեսակ ռիսկերով:

Ատենախոսության առաջին գլխում անդրադարձ է կատարվել ՀՀ-ում արդեն իսկ ներդրված գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրին: Առանց պետական գործուն աջակցության գյուղատնտեսության ոլորտի ապահովագրական համակարգն իրապես չի կարող զարգանալ: Մեծապես կախված լինելով պետական սուբսիդիաներից, գյուղատնտեսության ապահովագրության համակարգի անխափան գործունեության նպատակով ըստ ապահովագրատեսակի՝ ապահովագրավճարի 50-60%-ը փոխանցում է պետությունը: Մասնավորապես, կարկուտի և հրդեհի դեպքում 50 տոկոսի չափով, իսկ գարնանային ցրտահարության դեպքում՝ 60 տոկոսի չափով:

Ատենախոսության երկրորդ՝ «Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության կարգավորումը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գլխում կատարվել է ոլորտի կարգավորման կառուցվածքի և օրենսդրական դաշտի համապարփակ ուսումնասիրություն: Վերլուծվել է ՀՀ-ում գործող ապահովագրական քաղաքականության հիմնական ուղղությունները, ուսումնասիրել ոլորտի կառավարման գործիքները և առկա թերությունները: Ներկայացվել են նաև կոռուպցիոն ռիսկերը գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում՝ դիտարկելով դրանց հնարավոր ազդեցությունը համակարգի արդյունավետության և պետական սուբսիդավորման գործընթացների վրա: Ուսումնասիրելով ծրագրի իրականացման ողջ ընթացքը ու ցուցաբերած արդյունքները, համեմատելով միջազգային արդյունքները, արձանագրվել է, որ կոռուպցիոն ռիսկերից զերծ չեն նաև իրականացված ծրագրերը, որոնք կարելի է տարբերակել պայմանականորեն ըստ տարբեր կողմերի՝ ֆերմեր-պետական ներկայացուցիչ- ապահովագրական ընկերության աշխատակից եղյակում:

Գլուխը ներառում է նաև ոլորտի զարգացման հիմնախնդիրների ու հեռանկարների վերլուծություն՝ հիմնված էմպիրիկ և վիճակագրական տվյալների վրա:

ՀՀ-ում իրականացվող ագրոապահովագրության պիլոտային ծրագիրը մեթոդաբանության տեսանկյունից շատ ֆերմերների, ինչու չէ նաև ապահովագրական ընկերությունների համար իրական «գլխացավանք» են դարձել: Ֆերմերները դժգոհում են, քանի որ գործող հստակ մոդել չկա վնասների հաշվարկման համար: Կանոնակարգված մոդելի բացակայությունն առաջ է բերում նաև ապահովագրական ընկերության աշխատակիցների դժգոհությունները, երբ գնահատման ամբողջ աշխատանքներից հետո ֆերմերները հրաժարվում են համաձայնության գալ վնասված բերքի գնահատականի մասով:

ՀՀ գյուղատնտեսության փորձնական ծրագիրը վնասների գնահատման մոտեցումներում ֆերմերները մշտապես իրենց բացասական վերաբերմունքն են

արտահայտում: Մի կողմից, ֆերմերներն ապահովագրությունը դիտարկում են որպես սուբսիդիա, այսինքն պետությունը պետք է երաշխավորի, որ հնարավորինս շատ գումար ստանան, մյուս կողմից ֆերմերները դժգոհում են, քանի որ կարծում են, որ հստակ մոդել չկա սահմանված: Ֆերմերները դժգոհում են հաճախ ոչ ճշգրիտ գնահատումներից, քանի որ գտնում են, որ արձանագրություններում ավելի քիչ քանակությամբ բերք է նշված: Մոդելը սահմանել է ԳԱԱԳ-ի (Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալությունը) կողմից այն տարբեր կառուցակարգերով կիրառվում է ապահովագրական ընկերությունների կողմից: Ապահովագրական գործակալները, որոնք գնահատում են վնասները, նույնպես դժգոհում են, քանի որ մի քանի այցից հետո հնարավոր է ոչ մի գումար չստանան, եթե ֆերմերները չհամաձայնվեն ստորագրել վնասների գնահատման փաստաթղթերը: Գյուղատնտեսության ապահովագրության վնասների գնահատման գործընթացը հաճախ ավելի երկարատև ու դանդաղ կարող է ընթանալ, ինչը կարող է առաջ բերել անվստահություն ֆերմերների շրջանում: Բացի այդ, թափանցիկության պակասը ևս անվստահության պատճառ կարող է դառնալ:

Հասցված վնասի մեթոդաբանությունը մշակվում և հաստատվում է Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալություն կողմից և կիրառվում է միատեսակ բոլոր ապահովագրողների համար: Միևնույն ժամանակ, ապահովագրական ընկերություններն էլ են բախվում որոշակի խնդիրների: Նրանց դժգոհության հիմնական պատճառը ֆերմերների վերջնական գնահատականների հետ չհամաձայնելն է, ինչի հետևանքով ապահովագրական գործակալները մի քանի անգամ ստիպված են այցելել դաշտեր, սակայն հաճախ ծախսերն ու ջանքերն անիմաստ են դառնում: Ավելին, ֆերմերները հաճախ ակնկալում են ամբողջական փոխհատուցում, մինչդեռ պայմանագրերով նախատեսվում է միայն մասնակի ծածկույթ: Մասնագիտական ռեսուրսների սահմանափակ լինելը ևս խոչընդոտում է կազմակերպությունների օպերատիվ աշխատանքին, ինչը բացասաբար է ազդում ինչպես նրանց արդյունավետության, այնպես էլ հեղինակության վրա:

Գյուղատնտեսության ապահովագրության փորձնական ծրագիրն ունի մի շարք թերություններ: Մասնավորապես.

1. Ժամանակային հիմնախնդիրը, այսինքն սահմանված ժամկետներում գնահատումները չհամապատասխանեն իրական ժամանակահատվածին:
2. Հողատարածքների տարբերությունները, երբ նույն ֆերմերի հողամասի տարբեր հատվածներում վնասները կարող են լինել լիովին տարբեր (և չափերը և՛ հասցված վնասների ձևերը):
3. Տարաբնույթ մարդկային գործոններ, վնասների գնահատումը հաճախ ագրոապահովագրության պիլոտային ծրագրի իրականացման ընթացքում կարող է կրել սուբյեկտիվ բնույթ՝ գործակալի սուբյեկտիվ հաշվարկներից ելնելով, ինչը մշտապես ֆերմերների հետվեճերի առարկա է դառնում:
4. Բացի սուբյեկտիվությունից, մեթոդաբանությունը հաճախ ցուցանիշների ընտրության պարագայում ստեղծում է լրջագույն հիմնախնդիրներ, ինչի արդյունքում միջին բերքատվությունը հնարավոր է ընդհանրապես չհամապատասխանի տվյալ տարածքի միջին բերքատվության ցուցանիշներին:
5. Մեթոդաբանության տարատեսակ մոդելների դեպքում, մասնավորապես՝ վնասների տոկոսային հարաբերակցության դեպքում, որոշ ռիսկերի գնահատումը կարող է ուղեկցվել այլ ռիսկերի առաջացմամբ, օրինակ կարկուտից կամ երկարատև անձրևներից հետո նոր հիվանդությունների ի հայտ գալը:

6. Մեթոդաբանության տարատեսակությունն ու բարդ կառուցակարգերը հաճախ անհասկանալի են ֆերմերների համար, ինչը լրացուցիչ խոչընդոտ է վստահության տեսանկյունից:
7. Մեթոդաբանությունը հաճախ փոփոխվող կլիմայական տվյալները հաշվի չի առնում, բացի այդ, չկան արագ արձագանքման նոր հնարավոր գործիքներ, օրինակ՝ ավտոմատացման համակարգեր:

Պիլոտային ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար 2-րդ գլխում ուսումնասիրվել են գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի հիմնախնդիրները: ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում փորձնական ծրագրի արդյունավետությունը գնահատելու համար ուսումնասիրվել և վերլուծվել է, ապահովագրավարների, ապահովագրական պայմանագրերի քանակը, ապահովագրական հատուցումների չափը և դինամիկան ծրագրի սկզբից մինչև վերջին տարին: Կարևոր է նաև շարունակականության կանխատեսումները և հնարավորությունները ծրագրի ընդլայնման համար:

Ընդհանրացնելով նշենք, որ գյուղատնտեսության ոլորտում ներկայումս իրականացվող պիլոտային ծրագիրը մեծ հետաքրքրություն է առաջացրել ֆերմերների շրջանում: Դրա մասին են վկայում մինչև 2023 թվականը ներառյալ թե՛ ապահովագրական պայմանագրերի, թե՛ ապահովագրավարների, և թե՛ ապահովագրական հատուցումների քանակային մի քանի անգամ աճը: 2024 թվականը կարելի է համարել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում պիլոտային ծրագրի անցկացման վերաթևոցման տարի: Վերաթևոցելով արդեն իսկ գրանցած հաջողությունները, դասեր քաղելով կատարված բացթողումներից, համընդհանուր ապահովագրության հիմքեր դրվեցին: Հիմնախնդիրները և բացթողումները մեծապես պատճառ են հանդիսացել նախկինում տարատեսակ պիլոտային ծրագրերի կիսատ թողնելուն:

Ուսումնասիրելով ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում փորձնական ծրագրի դրական և բացասական կողմերը, առանձնացվել է այն հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի բնականոն զարգացմանը.

- ✓ Գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրում ընդգրկվել են սահմանափակ թվով ռիսկեր, մասնավորապես՝ կարկուտ, հրդեհ, վաղ գարնանային ցրտահարություն, այնուհետև ավելացավ երաշտը: Մնացած ռիսկերը հայաստանյան ագրարային ոլորտում ևս հաճախ են հանդիպում, մասնավորապես՝ քամիներ, տարատեսակ միջատներից հասցված վնասները, հիվանդությունները:
- ✓ Մեկ այլ խնդիր է այն, որ պայմանագրով մի տեսակ ռիսկից ապահովագրման դեպքում հնարավորություն չի տրվում մնացած ռիսկերից ապահովագրելու, այսինքն, եթե ընտրվել է պայմանագրով մեկ տեսակ ռիսկ, մնացած ռիսկերը հնարավոր չէ ներառել:
- ✓ Պիլոտային ծրագիրն իսկաբանե նախատեսված է ծախսային ապահովագրության մոդելով ապահովագրություն իրականացնելու նպատակով: Սակայն այն ոչ միշտ է արտացոլում իրական ապահովագրական հնարավորությունները, հաճախ անհրաժեշտ է լինում եկամտային ապահովագրություն էլ զուգահեռ իրականացնել:
- ✓ Վերապահովագրական ընկերության բացակայությունը, և վերապահովագրական ընկերությունների շուկայից դուրս գալուց հետո հայկական ապահովագրական շուկայում թողած բացասական հետևանքները:

- ✓ Ժամկետների խնդիրները, որը մեծապես պատճառ դարձավ ոլորտի կարևորագույն ապահովագրատեսակների՝ ծիրանի ու խաղողի պրոդուկտների ապահովագրական ծրագրում չնդգրկելը:
- ✓ Ֆերմերների վստահության խնդիրները՝ կապված ԳԱԱԳ կողմից մշակված ընդհանուր մեթոդաբանության հետ:
- ✓ Համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը նույնպես խնդիր է, որը պետք է աջակցի գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության կայացմանը:
- ✓ Եղանակային փոփոխությունների գնահատման ավտոմատ համակարգերի բացակայությունը: Վերջինիս լուծման արդյունքում ֆերմերներն առավելապես ճշգրիտ կարող են գնահատել իրենց հնարավորությունները և հիմնավորված ընդլայնել արտադրությունը:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում փորձնական ծրագրերը միշտ ունեցել են զարգացման առանձնահատուկ խոչընդոտներ: Ներկայիս պիլոտային ծրագիրը վաղուց արդեն պետք է կայացած լիներ: Իսկ կայուն համակարգի բացակայությունը կապված է մեծապես.

- ✓ Ռեսուրսների անհավասար բաշխման հետ, այսինքն կան 2 պրոդուկտներ որոնցից է կախված ծրագրի արդյունավետությունը: Առաջնահերթ պետք է իրականացվի դիվերսիֆիկացում կամ տարանջատում: Դա չի ենթադրում դրանց ապահովագրական ծածկույթում չընդգրկելը:
- ✓ Վերաապահովագրողների դուրս գալը և նորի փնտրտուքները: Արդեն իսկ վերաապահովագրողների թողնված համբավը չի կարելի պնդել, որ գյուղատնտեսության ապահովագրության համակարգը դարձնում են գայթակղիչ մնացյալ վերաապահովագրողների համար:
- ✓ Ծրագրի զարգացմանը խոչընդոտում են սահմանափակ ռիսկեր ընդգրկելը, ինչու չէ՞ նաև ապահովագրական պայմանագրում մեկ տեսակի ռիսկ ներառելը: Եթե հնարավորություն տրվի մեկ ապահովագրական պայմանագրով զեղչային համակարգով ներառել մի քանի տեսակ ռիսկերից ապահովագրություն, դա ավելի կշահագրգռի ֆերմերներին և կմեծացնի պահանջարկն օգտվելու գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգեր կիրառելուց:

Ծրագրի անկայուն գործունեության պատճառները և խնդիրները բազմաթիվ են: Հիմնախնդիրները չի կարելի տանել մեկ ուղղությամբ: Եռյակի յուրաքանչյուր մասնակից պատասխանատվություն պետք է կրի իր մասով: Թե՛ ՀՀ կառավարությունը, ի դեմս ԳԱԱԳ-ի, թե՛ ապահովագրական ընկերությունները և թե՛ ֆերմերներն ունեն իրենց բացթողումները ծրագրի զարգացման խոչընդոտները վաղուց դուրս չմղելու համար: Ոչ արդյունավետ վերահսկողության և պլանավորման, ժամկետների չհետևման համար մեծապես պատասխանատվությունն ընկնում է ԳԱԱԳ-ի վրա, որովհետև հենց այս կառույցն է համակարգում պիլոտային ծրագրի աշխատանքները:

Ատենախոսության երկրորդ գլխում կատարվել է նաև գյուղատնտեսության ոլորտում պիլոտային ծրագրի SWOT վերլուծություն՝ տարբերակելով պիլոտային ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները:

ՀՀ գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից է անասնաբուծությունը՝ պարենային անվտանգության ապահովման համատեքստում: Անասնաբուծության կայունության ապահովումը հնարավոր է ապահովագրական գործուն կառուցակարգերի ներդրմամբ: Այս ճյուղում նույնպես կան բազմաթիվ խնդիրներ, որոնց մասին նշվել է: Գյուղատնտեսության

ոլորտի անասնաբուծության ճյուղում ապահովագրության ներդրումը և արդյունավետ գործարկումն անհնար է առանց պետական աջակցության:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում մեղվաբուծությունը նույնպես յուրահատուկ նշանակելիություն է ստացել: Այն նույնպես զերծ չէ տարատեսակ ռիսկերից, որոնք անհրաժեշտ է լուծել:

Ոլորտում առկա խնդիրների հաղթահարումը հնարավոր է գործուն կառուցակարգերի միջոցով: Մասնավորապես՝ վերաապահովագրական համակարգերի զարգացման, օրենսդրական դաշտի հիմնովին փոփոխություններով, իրազեկման գործընթացների լավարկման միջոցով միայն հնարավոր կլինի գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգեր ներդնելու և զարգացնելու համար: Բացի այդ, գյուղատնտեսության ապահովագրության համընդհանուր գործիքակազմերը պետք է ճկուն լինեն ցանկացած փոփոխություններին համարժեքորեն արձագանքելու նպատակով:

Հաշվի առնելով իրավական դաշտի ուսումնասիրությունները, հեղինակը նկատել է, որ գյուղատնտեսության համընդհանուր ապահովագրության համար, դեռևս պակասում են որոշակի կառուցակարգեր, իսկ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով անհրաժեշտ է ներդնել վերահսկողական առավել օպտիմալ համակարգեր:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ-ում ռիսկերի ապահովագրության կառավարման հիմնախնդիրները և զարգացման հիմնական ուղիները» գլխում ներկայացվել են գյուղատնտեսության ապահովագրության համակարգի կատարելագործման ուղղություններն ու գործնական լուծումները: Առանձնացվել է կենդանիների և մեղվաբուծության ապահովագրության զարգացման հնարավոր տարբերակներ՝ առաջարկելով դրանց ներդրման մոդելներ և ներդրումային հաշվարկներ: Մասնավորապես՝ մշակվել է մեղվաբուծության ապահովագրության կառուցակարգ, որն արտացոլում է կլաստերային վերլուծության արդյունքները, և գնահատվել է անասնաբուծության ոլորտում «խելացի անասնաշենքերի» ներդրման արդյունավետությունը՝ ապահովագրության զարգացման խթանման տեսանկյունից: Բացի այդ, ներկայացվել են գյուղատնտեսական ապահովագրության կատարելագործման ռազմավարական մոտեցումներ, որոնք ուղղված են համակարգի ֆինանսական կայունության և ֆերմերների մասնակցության խթանմանը: Սեզոնային ինդեքսների և վիճակագրական ցուցանիշների հիման վրա կատարվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատում:

Համապարփակ ուսումնասիրության է ենթարկվում գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից մեկի՝ անասնաբուծության ճյուղը:

Անասնաբուծության ապահովագրությունն անհրաժեշտություն է մեր երկրի համար՝ ֆերմերների եկամուտների կայուն ապահովման, ագրարային հատվածի անխափան գործունեության և տարատեսակ ռիսկերի նվազեցման համար: Գյուղատնտեսական ոլորտի վերաբերյալ համաշխարհային գրականությունում տեղ գտած հոդվածներից կամ պարբերականներից, կամ տարատեսակ վերլուծություններից ելնելով, հեղինակն արձանագրել է, որ միանշանակ մոտեցում անասնաբուծության ապահովագրության սակագնի և ապահովագրավճարների հետ կապված չկա:³ Այս առանձնահատկությունը մեծապես կախված է պետությունների տարատեսակ մոտեցումներից, որը տարբեր երկրներում թե՛ մեթոդապես և թե՛ գործիքակազմով կարող է լիովին այլ լինել:

³ Shuaizhang Feng, Yujie Han, Huangang Qiu, Does crop insurance reduce pesticide usage? Evidence from China՝ <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S1043951X21000973>

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի անասնաբուծության ճյուղում կենդանիների վարակիչ հիվանդությունների, վնասատուների, տարատեսակ այլ ռիսկերի արդյունքում գրանցվել է 136 անկման դեպք: Բնական անկումներն այս ցուցանիշի մեջ ներառված չեն: Խոշոր եղջերավոր կենդանիների անկման ցուցանիշն եղել է 81 գլուխ, մանր եղջերավոր կենդանիներին՝ 42 գլուխ, խոզեր՝ 6 գլուխ և թռչունների դեպքում՝ 7 թև անկումներ:⁴

Ուսումնասիրելով ցուցանիշները, հեղինակը նշում է, որ ՀՀ-ում կենդանիների անկման դեպքերը վերջին տարիներին այնքան էլ ճշգրիտ չեն արտահայտում առկա պատկերը, սակայն դինամիկ փոփոխությունները ցույց են տալիս, որ անկման դեպքերն ավելացել են: Անկման դեպքերին զուգահեռ ավելացել են նաև ռիսկերը, որոնք պատճառ են դառնում կենդանիների անկման համար:

Աղյուսակ 1

Անասնաբուծության ոլորտի ցուցանիշների դինամիկ աճի որոշումը ՀՀ-ում

Տարեթիվ	Ցուցանիշներ	Բացարձակ հավելած		Աճի տեմպ, %		Հավելածի տեմպ, %		1% հավելածի տեմպ
		բազ	շղթ	բազ	շղթ	բազ	շղթ	շղթ
ՀՀ գյուղատնտեսական կենդանիների քանակը, հազ. հատ								
2020	3,380.3	0.0		100.0		0.0		
2021	3,459.6	79.3	79.3	102.3	102.3	2.3	2.3	33.8
2022	3,191.6	-188.7	-268.	94.4	92.3	-5.6	-7.7	34.6
2023	3,012.3	-368.0	-179.3	89.1	94.4	-10.9	-5.6	31.9
2024	2,889.7	-490.6	-122.6	85.5	95.9	-14.5	-4.1	30.1
ՀՀ գյուղատնտեսական կենդանիների անկման դեպքերը								
2020	20	0		100		0.0		
2021	39	19	19.0	195	195.0	95.0	95.0	0.2
2022	14	-6	-25.0	70	35.9	-30.0	-64.1	0.4
2023	8	-12	-6.0	40	57.1	-60.0	-42.9	0.1
2024	33	13	25.0	165	412.5	65.0	312.5	0.1
«խելացի» անասնաշենքերի քանակը Հայաստանի Հանրապետությունում								
2020	13	0		100.0		0.0		
2021	23	10	10	176.9	176.9	76.9	76.9	0.1
2022	13	0	-10	100.0	56.5	0.0	-43.5	0.2
2023	2	-11	-11	15.4	15.4	-84.6	-84.6	0.1
2024	7	-6	5	53.8	350.0	-46.2	250.0	0.06

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կենդանիների քանակային ցուցանիշները վերջին տարիներին նկատելի անկում են ապրել: 2020 թվականի համեմատ 2021 թվականին ցուցանիշը դրական փոփոխություն է կրել՝ արձանագրելով 2.3% աճ, 3.380 միլիոնից հասնելով մոտավորապես 3.459 միլիոնի (աղյուսակ 1): 2022 թվականից արդեն իսկ նկատվում է ցուցանիշի անկում՝ մինչև 2024 թվականը ներառյալ: Եթե համեմատենք 2020 թվականի ցուցանիշների հետ, անկման արդյունքում ՀՀ գյուղատնտեսական կենդանիների քանակը կազմել է 2.889 միլիոն՝ նվազելով 16.5 տոկոսով: Անկման պատճառները բազմաթիվ են, որոնք ներառում են ինչպես ոլորտի ռիսկերը, այնպես էլ վտանգավոր հիվանդությունների

⁴ Ի պատասխան 2025 թվականի հուլիսի 21-ի թիվ FS27-FD32-A35B-F7CC դիմումի

ի հայտ գալը: Հետևաբար, այս ցուցանիշները վկայում են, որ ՀՀ –ում գյուղատնտեսության ապահովագրության խիստ անհրաժեշտություն կա:

Ապահովագրական համակարգի արդյունավետ ներդրման և գործարկման համար առավել քան կարևոր է ապահովագրական գործակցի հաշվարկումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտի անասնաբուծության ճյուղում:

Մասնավորապես՝ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի անասնաբուծության ճյուղում ապահովագրական ռիսկի գործակիցը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$AR_t = (\alpha D_t/H_t + \beta/(1+S_t)) * 1000, \text{ որտեղ}$$

AR_t-ն տվյալ տարում ապահովագրական ռիսկի ցուցիչն է,

D_t -ն տվյալ տարում անկման դեպքերի թիվն է,

H_t -ն տվյալ տարում գլխաքանակի ցուցանիշը,

S_t -ն տվյալ տարում խելացի անասնաշենքերի թիվը,

α, β-ն կշռային գործակիցներ, օրինակի համար ընդունենք՝ α=0.7, β=0.3:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության ոլորտի անասնաբուծության ճյուղում ապահովագրական ռիսկի գործակցի վերլուծության արդյունքում նշվել է, որ այդ գործակիցը մեծամասամբ պայմանավորված է ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ֆերմերների տեխնիկական և տեխնոլոգիական գիտելիքներով ու դրանց օգտագործման հնարավորություններով, հանրապետության համար այս պահին սուբսիդիոն ու պետական աջակցությամբ տեխնոլոգիական ծրագրերով, մասնավորապես խելացի անասնաշենքի ծրագրով:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կենդանիների ապահովագրության պիլոտային ծրագիրը պետք է ունենա հետևյալ քայլերի հաջորդականությունը.

Քայլ 1: Բոլոր պիլոտային ծրագրերի համաձայնեցված կիրառում ու հետագայում պիլոտային ծրագրի շահառուների համար նախապայմաններից մեկը պետք է լինի ապահովագրությունը:

Քայլ 2: Ընտրվում է մոդելներից մեկը: Խելացի անասնաշենքերի մոդելների ընրությունից բացի սահմանվում են վերահսկողական կառուցակարգեր պատասխանատու ստորաբաժանման միջոցով: Իրականացվում է ապահովագրական ռիսկի գործակցի հաշվարկ՝ ըստ անկման դեպքերի, խելացի անասնաշենքերի և տվյալ տարում անասնազխաքանակի փոփոխությունների հաշվին:

Քայլ 3: Մոդելի համար սահմանվում է սակագին՝ հաշվի առնելով ոլորտում թե՛ միջազգային և թե՛ հայաստանյան հետազոտողների կատարած հաշվարկներն ու ներկայացված մեթոդներն ու կառուցակարգերը: Ապահովագրական պիլոտային ծրագրի համար սահմանվում է ապահովագրավճարների չափն ըստ առանձին տեսակների և առանձին ռիսկայնության համապատասխանությամբ: Ընդ որում, առաջին տարվա համար պետական միջոցներից ամբողջությամբ տրամադրվում է ապահովագրավճարը, պայմանով եթե հաջորդ տարվանից հրաժարվի, ֆերմերն ամբողջությամբ հետ պետք է վճարի արդեն իսկ ոչ միայն ապահովագրության պիլոտային ծրագրով կատարած վճարի, այլ ամբողջ սուբսիդիոն ծրագրերի համար: Աշխարհում տարբեր ցեղատեսակների համար շուկայական արժեքները խիստ տարբերվում են: Օրինակ, կարող է երկիր լինել, որտեղ մի ցեղատեսակի կենդանու արժեքը լինի 2 միլիոն դրամ նույնը այլ երկրում լինի մեկ միլիոն դրամ: Ըստ ՀՀ շուկայական արժեքի նաև պետք է հաշվել ապահովագրավճարը, որը կարող է տատանվել 40 հազարից մինչև կես միլիոն ՀՀ դրամ:

Քայլ 4: Տարատեսակ սուբսիդիոն ծրագրերի համակցությամբ ներկայացնելուց, ապահովագրական նախապայմանը սահմանելուց բացի իրականացվում է ապահովագրության մասնակից ֆերմերների վերապատրաստում՝ միջազգային և հայրենական մասնագետների կողմից:

Քայլ 5: Ապահովագրության մոդելը սահմանվում է օրենքով պարտադիրության բաղադրիչով: Այսինքն մի քանի սուբսիդիոն ծրագրերին մասնակցող ֆերմերը պարտադիր պետք է կատարի նաև ապահովագրություն: Սա հնարավորություն կտա պատասխանատվություն դնել նաև ֆերմերի վրա, և հնարավոր սուբսիդիոն ծրագրերը արդյունավետորեն բաշխել:


Քայլ 6: Մոնիթորինգի և վերլուծության իրականացում՝ ապահովագրական և սուբսիդիոն այլ նախագծերում արդյունքների ամփոփման և եռամսյակային, կիսամսյակային ու տարեկան հաշվետվությունների հիման վրա թերությունների բացահայտում, հնարավոր սխալների և թերությունների վերացում:

Քայլ 7: Շարունակականության ապահովում՝ ներառելով այլ սուբսիդիոն ծրագրերը: Արդեն իսկ գործող ապահովագրական մոդելի հիման վրա այլ ծրագրերի հետ փոխկապակցելու միջոցով առավել բարձր արդյունքների ստացում տարբեր տեսակի կենդանիների գծով ռիսկերի հնարվորինս նվազեցում ապահովելով:

Ամփոփելով կարող ենք նշել, որ հանրապետությունում ապահովագրության տարատեսակ կառուցակարգերը գյուղատնտեսության ոլորտում կիրառելն արդեն իսկ իրատեսական է, և պահանջված: Հաշվի առնելով գյուղատնտեսության ոլորտում գործող սուբսիդիոն ծրագրերի առկայությունը, հնարավոր փոխկապակցվածությունն ապահովագրության պիլոտային ծրագրի հետ, հնարավոր կլինի ձևավորել գյուղատնտեսության ոլորտի անասնաբուծության ապահովագրական ծածկույթի ստեղծման անհրաժեշտ կառուցակարգեր:

Մեղվաբուծությունն ոչ միայն գյուղատնտեսության, այլև տնտեսության այն եզակի ճյուղերից է, որն ունի թե՛ բնապահպանական և թե՛ տնտեսական կարևորություն՝ էկոհամակարգի կայունության ապահովման և գյուղատնտեսության աճին նպաստելու տեսանկյունից: Մեղվաբուծության ոլորտում ապահովագրական տարատեսակ գործիքների կիրառումը հնարավորություն է տալիս կայուն կառուցակարգեր ստեղծելու: Մեղվաբուծության ապահովագրության մեջ լոգարիթմական տեսքի օգտակարության ֆունկցիայից օգտվելով, գնահատվել է ֆերմերների առանց պետական աջակցության ապահովագրության հնարավորությունը:

Մեղվաբուծության ապահովագրության գործում լոգարիթմական տեսքի օգտակարության ֆունկցիայից օգտվելով կազմվել է համապատասխան հավասարումը՝ $u(x) = \beta * \ln(x)$, որտեղ x -ը ֆերմերների եկամուտն է մեղվաբուծությունից, օրինակ՝ մեղրի քանակը բազմապատկած վաճառքի միջին գնով՝ հանած ուղղակի ծախսերը: Հաշվելով օգտակարության ֆունկցիան, այնուհետև միջին արժեքները, տարբերակվել են լավ ու վատ տարիները մեղվաբուծության արտադրության ոլորտում: Մոդելի արդյունքը ստացվել է -1.9, հետևաբար եզրակացվել է, որ լոգարիթմական օգտակարության ֆունկցիայի դեպքում այն չի կարող վերաձվել վճարունակ ապահովագրավճարի՝ դրական կտրվածքով: Այսինքն, ֆերմերները գործնականում իրենց ուժերով չեն կարողանա ամբողջապես վճարել ապահովագրավճարները:



Գծապատկեր 1: Մեղվաբուծական արտադրանքի ծավալի, գների և ընդհանուր եկամտի փոփոխությունները ՀՀ-ում 2018-2024թթ.⁵

ՀՀ մեղվաբուծության ոլորտում 2018-2024 թվականների ընթացքում գները բարձրացել են, արտադրական ծավալները վերլուծվող ժամանակահատվածում գրեթե չեն փոխվել, իսկ եկամուտներն աճել: Ըստ դինամիկ փոփոխությունների վերլուծության, ՀՀ-ում մեղվափեթակների քանակային ցուցանիշները վերջին 10 տարվա ընթացքում էականորեն փոփոխվել են: 2015 թվականի համեմատ վերջին տարիներին այդ ցուցանիշները նվազել են: Եթե 2015 թվականին, ըստ Վիճակագրական կոմիտեի՝ արձանագրվել է 245.4 հազար հատ մեղվափեթակ, նվազելով 2024 թվականին արդեն այն հասել էր 189.1 հազար հատի՝ մոտավորապես գրանցելով 23 տոկոս անկման միտում: Բացառությամբ 2015 թվականի 2016-2020 թվականները համեմատաբար կայուն ցուցանիշներ են գրանցվել մեղվափեթակների քանակային դինամիկայում: 2021 թվականից արդեն կտրուկ անկում է գրանցել՝ կազմելով 12.2 տոկոս: Հաջորդ տարիներին ևս շարունակվել է անկման միտումները մինչև 2024 թվականը:

Մեղվաբուծության ապահովագրության օպտիմալ պիլոտային ծրագիր կազմելու նպատակով իրականացվել է կլաստերային վերլուծություն: Առավել օպտիմալ ծախսերի և արդյունավետության բարձր մակարդակով պիլոտային ծրագիր իրականացնելու նպատակով, ըստ կատարված վերլուծության՝ անհրաժեշտ է հաշվի առնել «միմյանց մոտ» մարզերը:

Ամփոփելով գյուղատնտեսության ոլորտի վերլուծությունները, իրականացրած բազմաթիվ վիճակագրական ցուցանիշների և հաշվարկների ուսումնասիրությունները, ներկայացվել է մեղվաբուծության ապահովագրության փորձնական ծրագրի ներդրման հաջորդական քայլերը:

Քայլ 1: Առաջնային տվյալների և տեղեկատվության հավաքագրում և ուսումնասիրում: Վերլուծելով ՀՀ գյուղատնտեսության ոլորտը, նշվում է, որ ամենակարևոր քայլերից է հստակ և հավաստի տեղեկատվության առկայությունը, որը հնարավորություն կտա հաջորդիվ քայլերն իրականացնել ավելի ճշգրիտ: Ըստ այդմ, մեղվաբուծության ճյուղում փորձնական ծրագրի ներդրման համար կարևոր է մեղրի արտադրության վաճառքների և մեղրի մնացորդի, մեղվափեթակների քանակի ու դրանց փոփոխության վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրությունը: Վերլուծության միջոցով կատարվել է մեղվափեթակների միջին արտադրողականության, ֆերմերների միջին եկամտաբերության

⁵ Ի պատասխան Վիճակագրական կոմիտեի 26 օգոստոսի 2025 թվականի ՎԿ/2-13/3133-2025 համարով գրության

և ըստ մեղվափեթակի եկամուտների հնարավոր ստացման վերաբերյալ գնահատում: Այն կարող է հիմք ծառայել հետագա հաշվարկների ու գնահատման կառուցակարգեր մշակելու համար:

Քայլ 2: Ապահովագրության պիլոտային ծրագրի գործարկման համար կարևոր է նաև ռիսկերի և եկամուտների գնահատումն ու հաշվարկները: Ըստ ուսումնասիրությունների, անհրաժեշտ է առանձնացնել մեղվաբուծության ոլորտում առկա ռիսկերը և հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են պատճառ դառնալ ֆերմերների եկամուտների նվազեցման համար: Ստացված արդյունքների հիման վրա էլ իրականացվել է կանխատեսում հնարավոր կորուստները գնահատելու համար: Ինչպես նաև սահմանվում է ապահովագրության նվազագույն չափը՝ ապահովելու ֆերմերների ֆինանսական կայունությունը:

Քայլ 3: Կարևոր քայլերից մեկը, ըստ կատարված վերլուծությունների՝ կլաստերային տարանջատումներն են մարզային բաժանումներով: Հասկանալով, թե որ մարզերն են առավել մոտ, կատարվել են հաշվարկներ՝ միասնական մարզերի համար՝ կիրառելով միևնույն գործիքակազմը և ռեսուրսները: Կլաստերային վերլուծության միջոցով կառուցվել է ապահովագրական մոդել՝ օպտիմալ ռեսուրսներով և գործիքակազմով:

Քայլ 4: Հավաքագրելով տեղեկատվությունը, գնահատելով ռիսկերը, և ընտրելով ուղղությունները, կիրականացվի փորձնական ծրագիրը: Նախորդ քայլով արդեն իսկ տարանջատված զույգ մարզերում կիրականացվի պիլոտային ծրագիրը՝ փորձարկելով և գնահատելով հետագա զարգացումները և ընդլայնման հնարավոր քաղաքականության իրականացումը: Պիլոտային ծրագրի իրականացման հենց սկզբից պետությունը կտրամադրի սուբսիդիաներ՝ նվազեցնելով ֆերմերների ֆինանսական բեռը, խթանելով մեղվաբուծության զարգացմանը: Մեղվաբուծության ապահովագրության արդյունավետ իրականացման նպատակով կարևոր է միասնական կառուցակարգերի ստեղծումը:

Քայլ 5: Այս փուլում իրականացվում է կատարված աշխատանքի ու պիլոտային ծրագրի իրագործման արդյունավետության գնահատում, և համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ կատարվում են կանխատեսումներ հետագա ապահովագրական գործիքակազմերի ընդլայնման համար: Գնահատման ժամանակ կատարվում են ցուցանիշների վերլուծություն, որի միջոցով բացահայտվում են ապահովագրական հիմնախնդիրները: Ինչից հետո մշակվում է պիլոտային ծրագրի բարելավման և կատարելագործման քաղաքականությունը:

Քայլ 6: Ապահովագրության պիլոտային ծրագրի ընդլայնման քաղաքականության իրականացում թե՛ ճյուղային և թե՛ ոլորտային ընդհանուր ապահովագրություն իրականացնելով: Արդյունքում, ապահովագրությունը փուլային եղանակով կտարածվի մյուս մարզերում, ինչպես նաև արդյունավետ իրականացման պարագայում անասնաբուծության ճյուղում: Ի վերջո, կմշակվի համընդհանուր մոդել՝ ամբողջ հանրապետության մակարդակով իրականացնելով գյուղատնտեսության համընդհանուր ապահովագրություն:

Քայլ 7: Ապահովագրական համակարգ-ֆերմերներ - համակարգող մարմին համակցործակցության միջոցով կձևավորվի նոր կառուցակարգ՝ պետության սուբսիդավորման և աջակցության միջոցով: Համագործակցության համատեքստում ֆերմերների շրջանում կիրականացվեն վերապատրաստումներ, իրազեկման ծրագրեր՝ ապահովելու ֆերմերների գիտելիքների հարստացման և ամրապնդելու ապահովագրական գործիքների կիրառման հնարավորությունները:

Աղյուսակ 2

Մեղվաբուծության ապահովագրության փորձնական ծրագրի ֆինանսական հաշվարկ⁶

Հաշվառված մեղվաբույծների թիվ	6,500.00	Ֆերմերների թիվ
Պիլոտային ծրագրի ընտրանք, %	10%	
Մեղվափեթեթանների թիվը, հատ	125,000.0	
Ֆերմերների ընտրանքային թիվը, մարդ	650	
Փեթեթանների ընտրանքային թիվը, հատ	12,500.0	
Մեկ փեթեթակի միջին արտատողողականություն, կգ	20	Ապահովագրության բազային ցուցանիշ, ՀՀ դրամ
1կգ մեղրի շուկայական միջին արժեք, ՀՀ դրամ	5,000.0	
1 փեթեթակի միջին եկամտաբերություն, ՀՀ դրամ	100,000.0	
Ընդհանուր հավանական եկամուտ, ՀՀ դրամ	12,500,000,000	
Ապահովագրության սակագին, %	6%	Ապահովագրության պայմանները
1 փեթեթակի ապահովագրական արժեք, ՀՀ դրամ	6,000.00	
Ապահովագրական վճարի պետական սուբսիդիայի չափ, %	60.0%	Սուբսիդավորման կառուցակարգերը
Ապահովագրական վճարի ֆերմերի մասնաբաժին,%	40.0%	
1 փեթեթակի համար պետական սուբսիդիա, ՀՀ դրամ	3,600.0	
1 փեթեթակի համար ֆերմերի ապահովագրական արժեք, ՀՀ դրամ	2,400.0	
Ընդամենը պետական սուբսիդիա, ՀՀ դրամ	45,000,000	
Ընդամենը ֆերմերների ընտրանքային թվի վճարած ապահովագրական վճար, ՀՀ դրամ	30,000,000	Հնարավոր վատագույն սցենար
Ընդհանուր հավանական եկամտի կորստի հնարավոր չափ, %	30%	
Ապահովագրական ընկերությունների հատուցման հավանական գումար, ՀՀ դրամ	3,750,000,000	

Ըստ մեղվաբուծության ապահովագրության փորձնական ծրագրի իրականացման վերլուծության, փուլային եղանակով հնարավոր և իրագործելի է պիլոտային ծրագիրը կյանքի կոչելը և շարունակականություն ապահովելը: Որպես պիլոտային ծրագրի սկզբնական փուլ 6500 ֆերմերներից կընտրվի 10 տոկոսը, այսինքն 650 ֆերմեր, որը հնարավորություն կտա կատարել պիլոտային ծրագրի փորձնական իրագործում: Պետական սուբսիդիաներն ըստ կատարված պիլոտային ծրագրի հաշվարկի կկազմեն 43 միլիոն դրամ: Արդյունքում, մեղվաբուծության ապահովագրության պիլոտային ծրագիրը կնպաստի ֆերմերների կայուն եկամուտների ստացմանը և ոլորտի զարգացմանն ու ընդլայնմանը:

⁶ Ի պատասխան Էկոնոմիկայի նախարարության N SR78-AIDA-E687-254A, 27.03.2023թ. -ի և հ.770964 27-03-2023թ. -ի, հ. 09.4/10308-2025 և Վիճակագրական կոմիտեի N ՎԿ/2-13/2076-2025 համարներով գրությունների:

**ՀՀ գյուղատնտեսության պիլոտային ապահովագրության հիմնական
ցուցանիշների փոփոխությունները⁷**

Տարեթիվ	Ցուցանիշ	Բացարձակ		Աճի տեմպ		Հավելանքի տեմպ $T_{\text{այլ/չ}}$, %		1% հավելանքի տեմպ $A \%$
		$\Delta y_{i/t-t}$		$T_{P_{i/A}}$, %				
		բազ	շղթ	բազ	շղթ	բազ	շղթ	
Կնքված պայմանագրերի քանակը, հառ								
2020	3354	0.0		100.0		0.0		
2021	12207	8853.0	8853.0	364.0	364.0	264.0	264.0	33.5
2022	12002	8648.0	-205.0	357.8	98.3	257.8	-1.7	122.1
2023	13865	10511.0	1863.0	413.4	115.5	313.4	15.5	120.0
2024	27	-3327.0	-13838	0.8	0.2	-99.2	-99.8	138.7
Համախառն ապահովագրվածք, մլն. դրամ								
2020	353.5	0.0		100.0		0.0		
2021	1777.3	1423.8	1423.8	502.8	502.8	402.8	402.8	3.5
2022	3100.5	2747.0	1323.2	877.1	174.5	777.1	74.5	17.8
2023	4975.9	4622.4	1875.4	1407.6	160.5	1307.6	60.5	31.0
2024	22	-331.5	-4953.9	6.2	0.4	-93.8	-99.6	49.8
Հատուցումների քանակը, հառ								
2020	1364	0.0		100.0		0.0		
2021	7165	5801.0	5801.0	525.3	525.3	425.3	425.3	13.6
2022	10574	9210.0	3409	775.2	147.6	675.2	47.6	71.7
2023	8664	7300.0	-1910	635.2	81.9	535.2	-18.1	105.7
2024	0	-1364.0	-8664	0.0	0.0	-100	-100	86.6
Հատուցումների գումարը,մլն. դրամ								
2020	676.3	0.0		100.0		0.0		
2021	1668.8	992.5	992.5	246.8	246.8	146.8	146.8	6.8
2022	6800.6	6124.3	5131.8	1005.6	407.5	905.6	307.5	16.7
2023	2700	2023.7	-4100.6	399.2	39.7	299.2	-60.3	68.0
2024	0	-676.3	-2700	0.0	0.0	-100	-100	27.0

Ամփոփելով 2020-2024 թվականներին ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության պիլոտային ծրագրի ցուցանիշները, նշվում է, որ թե՛ ապահովագրական կնքված պայմանագրերի քանակը, թե՛ ապահովագրվածքները 2020 թվականից մինչև 2023 թվականներն աճել են, իսկ 2024 թվականին՝ կտրուկ նվազել (աղյուսակ 2): Ապահովագրական հատուցումների քանակը և ընդհանրապես ապահովագրական հատուցումները պիլոտային ծրագրի սկզբից աճել են: 2023 թվականին հատուցումների ցուցանիշներն անկում են գրանցել, իսկ 2024 թվականին ընդհանրապես ապահովագրական հատուցումներ գյուղատնտեսության ոլորտում չեն կատարվել:⁸ Կատարվել է նաև պիլոտային ծրագրի վնասաբերության գնահատում: ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վնասաբերության ցուցանիշները զգալի տատանումներ են գրանցել: 2020 թվականին և 2022 թվականին վնասաբերության ցուցանիշները գերազանցել են 100 տոկոսը գրեթե կրկնակի անգամ, ինչը փաստում է, որ հատուցումները գերազանցել են հավաքագրած ապահովագրվածքները:

⁷ Ի պատասխան Էկոնոմիկայի նախարարության 2025 թվականի հունիսի 23-ի հ. 09.7/14044-2025 և հուլիսի 4- 2025 թվականի հ. 09.7.12/15080-2025, 2025 թվականի օգոստոսի 19- հ. 09.7/17843-2025 գրությունների:

⁸ Ի պատասխան Էկոնոմիկայի նախարարության N 09.7/17843-2025՝ 19.08.2025թ.-ի գրության

2023 թվականին վնասաբերության ցուցանիշը նվազել է մի քանի անգամ, իսկ 2024 թվականին գրեթե հավասարվել է 0-ի, քանի որ հատուցումներ չեն կատարվել: Ընդհանուր առմամբ վնասաբերության միջին ցուցանիշները նույնիսկ վերջին տարվա տվյալները հաշվի առնելով 100 տոկոսից բարձր են՝ կազմելով 115.8 տոկոս, ինչը վկայում է ծրագրի ռիսկայնության մասին:

Ատենախոսությունն եզրափակվում է **եզրակացություններով**, որտեղ ամփոփ կերպով ձևակերպվել են կատարված եզրահանգումները, ինչպես նաև առաջարկվել են առկա խնդիրների լուծման հնարավոր եղանակները:

Ըստ իրականացված վերլուծությունների կատարվել են հետևյալ եզրահանգումները.

- ✓ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական կառուցակարգերը արդյունավետ են: Ըստ կատարված վերլուծությունների, փորձնական ապահովագրական ծրագիրը, որն իրականացվում էր ՀՀ գյուղատնտեսության ոլորտում մինչև 2023 թվականը, միմյայն պահանջարկի գերաճ էր գրանցել:
- ✓ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական կառուցակարգերի զարգացումն ենթադրում է շարունակական զարգացում՝ ըստ ներկայացվածի վերջնարդյունքում համընդհանուր ապահովագրություն ունենալով ոլորտում:
Հեղինակի գնահատմամբ, ՀՀ գյուղատնտեսության ոլորտը պատրաստ է համատարած ապահովագրություն իրականացնելուն ամբողջ ոլորտում:
- ✓ Ըստ փորձնական ծրագրի ուսումնասիրությունների, կան տեղեկատվության տրամադրման հիմնախնդիրներ, ինչպես նաև թափանցիկության հետ կապված խնդիրներ: Բացի այդ եղանակային ցուցանիշները նույնպես նորարական մեթոդներով պետք է անդդիատ թարմացվեն:
- ✓ Խոսելով փորձնական ծրագրի դրական ու բացասական կողմերից, կարևոր է նշել վերահսկողության հիմնախնդիրը, ինչը ԳԱԱԳ-ի կողմից է կատարվում, որի գործունեության ընթացքում բացթողնված հնարավորությունը վերաապահովագրողների շուկայից դուրս գալն էր, և նոր վերաապահովագրողի չներգրավելը, ինչն իրատեսական չի թվում: Այս ամենը հանգեցրին անվտանգության ավելացմանն ու համակարգի բնականոն գործունեության խաթարմանը: Հետևաբար, առանց պետական արդյունավետ կառավարման հնարավոր չէ կայուն զարգացում ապահովել գյուղատնտեսության ոլորտի ապահովագրական կառուցակարգերի ընդլայնման տեսնակյունից:
- ✓ Ապահովագրության ենթակա են որոշակի պրոդուկտներ, որոնց արտադրությունը բարձր ռիսկային է, սակայն դրանք ուշադրության չեն արժանանում: Այդպիսիք են անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, որոնք ևս կարևոր են հանրապետության համար:
- ✓ Անասնաբուծության ապահովագրության հնարավոր զարգացումները և ներդրման քայլերի հաջորդականության ներկայացնելը ցույց են տալիս, որ գյուղատնտեսության ոլորտում համատարած ապահովագրության իրականացումը ավելի քան իրատեսական է դարձել: Ապահովագրական մշակույթի և մոդելի ներդրումը նույնպես կարևոր է անասնաբուծության ապահովագրության համար:
- ✓ Քանի որ գյուղատնտեսությունը բարձր ռիսկայնությամբ ոլորտ է, այն եկամտաբերության տեսանկյունից կարող է ցածր լինել, ինչը ևս մեկ գործոն է ապահովագրական ընկերությունների համար ոլորտում գործունեություն չձափայլելու նպատակով:

- ✓ Անասնաբուծության ապահովագրության հեռանկարային ուղղություն է մեղվաբուծությունը: Ուսումնասիրելով մեղվաբուծության ցուցանիշների դինամիկ փոփոխությունները և զարգացումները, արձանագրվել է, որ մեղրի արտադրության ծավալները վերջին տասնամյակում նույն մակարդակին են մնացել: Մեղրի արտադրության միջին քանակը 2 հազար տոննայի սահմաններում է եղել:
- ✓ Ուսումնասիրության վերլուծությունները փաստում են Հայաստանի Հանրապետության մեղվաբուծությունը դանդաղ է զարգանում, ինչի պատճառները բազմաթիվ են, այդ թվում՝ տարատեսակ ռիսկերը, որոնք զրկում են ֆերմերներին եկամուտ ստանալուց: Ըստ ցուցանիշների վերլուծության, մեղվաբուծության մեջ մեղրի մնացորդը կարող է ելակետային տվյալ հանդիսանալ հետագա ապահովագրության ներդրման համար: Իսկ առավել օպտիմալ ապահովագրական կառուցակարգեր սահմանելու համար իրականացվել է կլաստերային վերլուծություն՝ առավել մոտ մարզերն առանձնացնելու նպատակով:

Գյուղատնտեսության ռիսկերի ապահովագրության խոչընդոտները վերացնելու, կայուն համակարգ ներդնելու, արդեն իսկ գործող փորձնական ծրագրերն արդյունավետ գործարկելու և զարգացնելու նպատակով անհրաժեշտ են հետևյալ քայլերի կատարումը.

1. ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության փորձնական ծրագրի հաջողման և զարգացման նպատակով առաջնային քայլերից է տեղեկատվության հասանելիության և համահավասար բաշխման հնարավորությունը: Կիրառելով համապատասխան գործիքներ, կստեղծվի տեղեկատվության փոխանցման արդյունավետ խողովակներ՝ հասանելի դարձնելով ֆերմերներին համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով: Տեղեկատվական միասնական հարթակների ստեղծումը հնարավորություն կտան ֆերմերներին տեղեկացված լինելու տարատեսակ հիվանդությունների և դրանց տարածվածության մասին:

2. Թափանցիկության բարձրացման նպատակով փորձնական ծրագրի հաշվետվություններն առնվազն եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով պետք է հրապարակվեն: Իսկ գործքիների կիրառման հնարավորությունների և համապատասխան կառուցակարգեր ստեղծելու նպատակով պետք է իրականացվեն գովազդային արշավներ:

3. Ըստ վերլուծությունների հատկապես մեղվաբուծության ճյուղում արդյունավետ է բացի ծախսային ապահովագրության մեթոդից զուգահեռ կիրառել եկամտային ապահովագրության ձևերը:

4. Փորձնական ծրագրի վերլուծություններից ելնելով, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն մշակաբույսերին, որոնք առավել քան կարևոր են գյուղատնտեսության ապահովագրության ծածկույթների ընդլայնման նպատակով: Հատկապես ծիրանի և խաղողի վերաբերյալ ուսումնասիրությունները մեկ անգամ ևս փաստեցում են դրանց կարևորությունը գյուղատնտեսության ապահովագրության զարգացման համատեքստում:

5. Թույլ վերահսկողության արդյունքում բազմաթիվ հիմնախնդիրներ առաջացան գյուղատնտեսության ապահովագրության փորձնական ծրագրում: Հետևաբար նորարար տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավոր է հասնել լավագույն արդյունքի՝ խուսափելով կոռուպցիոն կամ այլ տեսակի ռիսկերից:

6. Գյուղատնտեսության ապահովագրության ոլորտի մասնագետներին ներգրավվելով անհրաժեշտ է իրականացնել վերապատրաստման ծրագրեր՝ ֆերմերների գիտելիքների և

կարողությունների ընդլայնման համար: Թեկուզ փոքր խմբերով, բայց շարունակական բնույթով պետք է իրականացնել դասընթացներ՝ ֆերմերներին առավել տեղեկացված և պատրաստված դարձնելու համար:

7. Եկամտային ապահովագրության գործիքների կիրառման դեպքում այն ֆերմերները, որոնք ապահովագրության նվազագույն շեմ կապահովեն, ինչպես ԱՊՊԱ-ի դեպքում, անհրաժեշտ է սահմանել բոնուսային համակարգ՝ պարգևատրելով ֆերմերներին կայուն արտադրական գործունեություն ծավալելու համար:

8. Ինչպես ցույց է տալիս հանրապետության գյուղատնտեսության ապահովագրության «դառը» փորձը, ՀՀ-ում կարևոր է վերաապահովագրողների ներկայությունը շուկայի զարգացման և ապահովագրական ընկերություններին վստահություն ներշնչելու համար: Հնարավորինս դրական ներկայացնելով շուկան, «հեռացված» գնացքը պետք է հետ կանչել:

9. Բացի բուսաբուծության ճյուղից, անհրաժեշտ է փորձնական ծրագիր իրականացնել նաև անասնաբուծության ճյուղում: Օգտագործելով բազմաթիվ և տարատեսակ սուբսիդիոն ծրագրերն անասնաբուծության ճյուղում հնարավոր է ստեղծել անասնաբուծության ապահովագրության նոր մոդել՝ վերլուծության ընթացքում ներկայացված քայլերի հաջորդականությամբ: Ընդ որում, հաշվի առնելով արդեն իսկ առաջացած հիմնախնդիրները տարբեր պիլոտային ծրագրերում, անհրաժեշտ է կիրառել այնպիսի մոտեցում, որ մոդելը հնարավորինս լինի շարունակական:

10. Համընդհանուր հաշվառում իրականացնելուց բացի, կարևոր է նորարար տեխնոլոգիաների կիրառումը, հատկապես GPS սարքավորումները, որոնց արդեն իսկ կիրառման օրինակներ կան մեր երկրում: Դա կարող է խրախուսվել նաև կառավարության կողմից՝ նվազեցնելով ռիսկերը:

11. Անասնաբուծության ճյուղում ավելի քան կարևորելով և վերլուծելով մեղվաբուծության զարգացումը, արդեն իսկ հնարավոր է և կա անհրաժեշտություն փուլային եղանակով ապահովագրական կառուցակարգեր ներդնելու համար՝ ապահովելով ֆերմերների եկամուտների կայունություն: Ընդ որում, պիլոտային ծրագրի սկզբից պետք է ուսումնասիրել մեղվաբուծության ցուցանիշների փոփոխությունները: Իսկ կլաստերային վերլուծության միջոցով առավել օպտիմալ մոդել կիրառել՝ արդյունավետ բաշխելով ռեսուրսները և ապահովագրությունն ավելի խելամիտ կիրառելով: Անհրաժեշտ է նաև կատարել մաքսային օրենսդրության փոփոխություն՝ մեղվաբուծությունն ավելի պահանջված և գրավիչ դարձնելու հանրապետության ֆերմերներին աջակցելու նպատակով: Նորարական տեխնոլոգիաների կիրառման ժամանակ պետք է բացառել այն գործիքների կիրառումը, որոնք մեղուների համար կարող են վնասակար ազդեցություն ունենալ:

12. Հակակոռուպցիոն միջոցառումների շրջանակներում անհրաժեշտ է ներդնել ավտոմատացված համակարգեր՝ նվազեցնելով ապահովագրական գործակալ- ֆերմեր շփումը, իսկ միասնական թվային հարթակը հնարավորություն կտա վեր հանելու մեթոդաբանության խնդիրները և կբարձրացնի թափանցիկությունը:

Ամփոփելով գյուղատնտեսության ապահովագրության համալիր ուսումնասիրությունը, անհրաժեշտ է նշել, որ գյուղատնտեսության բուսաբուծության ճյուղում ապահովագրության փորձնական ծրագրերը լավարկման անհրաժեշտություն ունեն, իսկ անասնաբուծության ճյուղում, հատկապես մեղվաբուծության ապահովագրական կառուցակարգերի կիրառումն իրականացվելու է փուլային եղանակով՝ ըստ առանձին տարրերի, ընդհանուր անասնաբուծության ճյուղում ապահովագրության ներդրման և զարգացման նպատակով անհրաժեշտ է սուբսիդիոն ծրագրերը միաձուլել և ռիսկերը նվազագույնի հասցնել՝

վերջնարդյունքում համընդհանուր ապահովագրական համակարգ ստեղծելով՝ խթանելով թե՛ ոլորտի և թե՛ տնտեսության զարգացումը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Nersisyan N., "Fertility of Agricultural Risk Insurance in Armenia", Messenger of ASUE, №5, 2022, p. 30-44՝ <https://asue.am/upload/files/science/banber/2022-year-5/2.pdf>
2. Nersisyan N., "Beekeeping Insurance in RA", 2023, p. 230-241՝ <https://asue.am/upload/files/science/ASECU-git.pdf>
3. Ներսիսյան Ն., «Գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի արդյունավետության գնահատումը ՀՀ-ում», Գավառի պետական համալսարանի 30-րդ տարեդարձին նվիրված ժողովածու, 2024 թ., էջ 188-197՝ <https://publications.gsu.am/wp-content/uploads/2024/09/gitaioxov16.pdf>
4. Nersisyan N., "The Bitter Fruits of the Agricultural Insurance Pilot Program in RA", Регион и мир, №5 (54), 2024, p. 150-154՝ https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2024_5_150_154.pdf
5. Nersisyan N., "Livestock Insurance Prospects in RA", Messenger of ASUE, №2, 2024, p. 80-92՝ <https://asue.am/upload/files/science/banber/2024-year-2/6.pdf>
6. Ներսիսյան Ն., «Գյուղատնտեսության ապահովագրությունը աշխարհի տարբեր երկրներում և հնարավոր տարբերակների կիրառումը ՀՀ-ում», Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարան, «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» ժողովածու, 2024 թ., էջ 341-352՝ <https://www.rea.ru/~file/130859/23.Nersisyan.pdf>
7. Nersisyan N., "Income Insurance in the Beekeeping Sector", Messenger of ASUE, №3, 2024, p. 36-44՝ <https://asue.am/upload/files/science/banber/2024-year-3/4.pdf>
8. Nersisyan N., Opportunities for the development of beekeeping insurance in the Republic of Armenia, Messenger of ASUE, №2, 2025, p. 79-97՝ <https://asue.am/upload/files/science/banber/2025-year-2/5.pdf>
9. Нерсес Норайрович Нерсисян, Инновационные подходы к развитию системы страхования животноводства в условиях экономических вызовов, 2025 2(3), стр. 302-311, Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարան՝ https://www.rea.ru/~file/203089/Sbornik-1_13.pdf

Нерсес Норайрович Нерсисян
ПУТИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ СТРАХОВАНИЯ
РИСКОВ В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ (НА ПРИМЕРЕ РА)

Диссертация представления на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 00.03 - «Финансы, бухгалтерский учёт».

РЕЗЮМЕ

В Республике Армения, как и во многих странах мира, сельское хозяйство считается ключевой отраслью экономики. Продовольственная безопасность страны во многом зависит от сельского хозяйства, что делает роль этой отрасли ещё более значимой, особенно в контексте устойчивого развития. Поскольку сельское хозяйство постоянно подвергается воздействию стихийных бедствий, оно является высокорисковой отраслью экономики. Известно, что наиболее эффективным инструментом управления рисками в аграрном секторе является страхование, которое позволяет хозяйствующим субъектам получать адекватную компенсацию в случае возникновения страховых случаев.

В целом, агрострахование предоставляет финансовые гарантии, призванные защитить фермеров от непредвиденных обстоятельств, включая воздействие вредителей, стихийные бедствия, болезни сельскохозяйственных культур а также колебания рынка. Страхование даёт возможность снизить риски, предлагая финансовую помощь в случае повреждения урожая, падение скота или порчи оборудования. За прошедшие годы появились различные методы управления рисками, помогающие фермерам справляться с рисками и потенциальными убытками, масштабы которых могут значительно различаться.

Повышение производительности и уровне рентабельности в сельскохозяйственном секторе, а также повышение эффективности в целом, могут быть достигнуты за счёт применения соответствующих и гибких инструментов управления рисками.

Таким образом, аграрный сектор Республики Армения, будучи стратегически важным сектором, не застрахован от различных рисков, которые могут создавать проблемы как для фермеров, так и для государства. Страхование сельскохозяйственных рисков в Республике Армения немыслимо без государственной поддержки, что и обуславливает актуальность темы данной диссертации.

Цель и задачи исследования: Цель данной диссертации заключается в раскрытии и анализе современного состояния страхования рисков в сельском хозяйстве Республики Армения и вызовов его развития, а также в представлении эффективных путей совершенствования системы государственной поддержки.

Для достижения поставленной цели в диссертации были определены следующие задачи:

- ✓ изучение существующих рисков, видов и возможных вариантов управления ими в сельскохозяйственной сфере,
- ✓ анализ международного опыта сельскохозяйственного страхования и применяемых в данной сфере инструментов,
- ✓ анализ правового регулирования страхования сельскохозяйственных рисков в Республике Армения, существующих проблем в сфере правоприменения,
- ✓ исследование проявлений возможных коррупционных рисков в области сельскохозяйственного страхования в Республике Армения,

- ✓ выявление возможных отклонений от нормального функционирования системы государственной поддержки страхования рисков в Республике Армения,
- ✓ выявление возможностей развития страхования животных, особенно пчеловодства, в Республике Армения,
- ✓ выявление возможных путей совершенствования системы страхования сельскохозяйственных рисков в Республике Армения и развития государственной поддержки.

Объект и предмет исследования. Объектом исследования является сфера страхования сельскохозяйственных рисков Республики Армения. Предметом исследования является развитие системы государственной поддержки страхования сельскохозяйственных рисков в Республике Армения, а также вопросы управления ею и разработка путей повышения эффективности.

Научная новизна заключается в следующем:

- ✓ проведена оценка эффективности пилотной программы агрострахования на основе сезонных индексов и статистических показателей, в рамках которой на основе корреляционного анализа оценено влияние изменений в страховании наиболее востребованной продукции – винограда и абрикосов – на эффективность пилотной программы.
- ✓ исходя из страхования субсидирования животноводства как исходной точки, была проведена оценка действующих отраслевых субсидируемых проектов, эффективности внедрения инновационных технологий (включая «умные» фермы), а также их вклада в развитие отрасли и реализацию страховых программ,
- ✓ за исходную точку, принимая данные остатков меда в пчеловодстве, была разработана структура внедрения страхования в пчеловодстве, а с помощью кластерного анализа выделены «наиболее близкие» регионы с целью реализации программы оптимальных ресурсных затрат и эффективного страхования,
- ✓ с помощью логарифмической модели оценена готовность фермеров платить за страхование в сфере пчеловодства без государственной поддержки и разработана методика применения страховой модели, которая доказывает высокую рискованность отрасли и показывает, что внедрение эффективной системы страховых взносов без государственных субсидий практически невозможно.

NERSES NORAYR NERSISYAN
THE WAYS TO DEVELOP THE STATE-SUPPORTED AGRICULTURAL RISK INSURANCE
SYSTEM (BY THE EXAMPLE OF RA)

Abstract of the thesis for receiving the scientific degree of PhD of economic sciences in the field
00.03 - "Finance, Accounting".

ABSTRACT

In our republic, as well as in many countries of the world, agriculture is considered a core sector. The country's food security largely depends on agriculture, which makes the role of the sector even more important, especially within the framework of the country's sustainable development. Since agriculture is constantly exposed to the effects of natural disasters, it is also included in the list of high-risk economic sectors. And the most effective tool for risk management in the agricultural sector is insurance, which allows economic entities to receive appropriate compensation in case of various risks.

In general, agricultural insurance provides financial guarantees designed to protect farmers from unforeseen events, such as pests, natural disasters, diseases, market fluctuations, etc. Insurance provides an opportunity to mitigate risks by offering financial assistance in case of crop, livestock, or equipment damage.

Based on chronological changes, various risk management methods have emerged over the years, helping farmers cope with risks and potential losses that could vary significantly in magnitude.

Increasing productivity and profitability in the agricultural sector, as well as improving efficiency, can be achieved by applying appropriate and flexible risk management tools.

Being a sector of strategic importance, the agricultural sector of the Republic of Armenia is not free from various risks that can create problems for farmers, as well as for the government. Agricultural risk insurance in the Republic of Armenia is hard to imagine without state support, this explains the relevance of the topic of this dissertation.

The research aims to identify and analyze the current state of agricultural risk insurance in the Republic of Armenia and its development challenges, presenting effective pathways for improving the system of state support.

To achieve the stated goal of the dissertation, the following objectives have been identified:

- ✓ to study the existing risks in the agricultural sector, their types and possible management options,
- ✓ to analyze the international experience of agricultural insurance and the tools used in the sector,
- ✓ to analyze the legal framework of agricultural risk insurance in the Republic of Armenia, the existing problems in the sector,
- ✓ to study the manifestations of possible corruption risks in agricultural insurance in the Republic of Armenia and the anti-corruption policy,
- ✓ to identify possible deviations from the normal operation of the state support system for risk insurance in the agricultural sector of the Republic of Armenia, and its peculiarities,
- ✓ to identify the opportunities for the development of animal insurance, especially beekeeping, in the Republic of Armenia,

- ✓ to identify possible ways to improve the agricultural risk insurance system of the Republic of Armenia and develop state support.

Object and subject of the research. The object of the research is the agricultural risk insurance sector of the Republic of Armenia. And the subject of the research is the development of the state support system for agricultural risk insurance of the Republic of Armenia, as well as management issues and the development of ways to increase efficiency.

The scientific novelty of the thesis. As a result of the research and analysis of the dissertation, we have identified the following scientific novelties.

- ✓ an assessment of the effectiveness of the agricultural insurance pilot program was carried out based on seasonal indices and statistical indicators, within the framework of which, based on correlation analysis, the impact of changes in insurance for the most popular products - grapes and apricots - on the effectiveness of the pilot program was assessed.
- ✓ by highlighting the subsidy projects operating in the sector as a single point of livestock insurance, the effectiveness of the introduction of innovative technologies, including smart livestock buildings, in the livestock sector and their contribution to the development of the sector and the implementation of insurance programs was assessed.
- ✓ taking beekeeping honey residue data as a starting point, a framework for introducing beekeeping insurance was developed, and through cluster analysis, the "closest" regions were identified for implementing a program of optimal resource expenditure and effective insurance
- ✓ the willingness of farmers to pay for insurance in the beekeeping sector without state support was assessed using a logarithmic model, and a methodology for applying the insurance model was developed, which proves the high riskiness of the sector and shows that the introduction of an effective system of insurance premiums without state subsidies is almost impossible.

